



ԱՋԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բաժանորդացիութիւն
Պաշտօնակալ համար տարեկան 6 ֆր
" " " " 6 ամսեայ 3 " "
" " " " 3 " " 2 " "
Արտատպահանձնի համար տարեկան 8 " "
Ծանուցմունք, տարեկան 40 ամսեայ

ՀԱՍՏԷ
Խմբագրութիւն «Իրավունք»
Редакция на вѣстникъ
„Иравункъ“
ВАРНА (България).
Rédaction du journal
„Iravounk“
VARNA (Bulgarie)

Խմբագրութիւն ուղեւոր
գրութիւնք եւ չեն զրկուիր լար-
մար գաղութներն միայն կը հը-
րատարակուին :

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԽԱՆՈՒՑՈՒՄ

Մեր ընթերցողներէ շատեր կա-
ռաջարկեն մեզ «ԻՐԱՎՈՒՆԿ»-ը
չարաթղթերէ վերածել. մեր
համակիրներու այս փափքը մօտ
ժամանակի մէջ կատարելու համար
պիտի ջանամք հարկաւոր միջոցնե-
րն ձեռք առնել, և սիրելի է մեզ
յուսող թէ մեր այս նոր ձեռնարկի
մէջ պիտի քաջալերուի ինչ պատուար
ժան հասարակութենէ:

ԽՄԲ. ԽՐԱՌՈՒՆԻՒՄ

ԹՈՒՐԲ ԿԱՌԱՎՈՐՈՒԹԻՒՆԸ
ՀԱՆԻՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ

(Ըր. Չրք Բաշե)

Կառավարական այս ուղղութեան
անվերջ հետեւանքն ու անմիջա-
կան արդիւնքն եղան խլիճաւոր-
ներ և շարժումներ. Հայազգին մէջ,
որ իր պատմական և իր գոյութեան
պայմաններէն պիտի զրկուի
ժողովուրդ ստիպուեցաւ քննա-
պաշտպանութեան միջոցներու վը-
րայ խորհելու և դարձնելու:

Այլապէս չէր կարող ըլլալ Հայը
թէ և թուրք տարիներ ինքնակամ
զօրութեան հանդէպ կը զգար իր
տկարութիւնը, սակայն բնական
օրինօք չէր կրնար թողնել, որ իր
վիզը անբան ոչխար մը միջեւ
պէս, գանակին մօտեցնեն, հան-
դարտիկ, առանց ընդգիծութեան
հանգիստելու, այս շատ պարզ է,
ուստի նա ստիպուեցաւ, կը կր-
նէր, ինքնապաշտպանութեան գի-
մելու, և այս ստիպումը աշխարհ
աւելի զօրեղ էր, ոչքան տառապան
Եւրոպայ Հայ ժողովուրդեան ցուե-
րուն նկատմամբ անտարբեր կեր-
էր հակառակ Պէւլիին գաղտնի-
րին, որ փութանալ Հայերուն օգուտ
մէ տալու, ընդ հակառակը՝ իրենց
համար ցաւերու և հեծութեանց
նոր թուական մը բացաւ:

Ինքնապաշտպանութեան ստի-
պողական հարկը մեր մէջ յառաջ
բերու անձնազօրութեան հիմնա-
նի գործեր, գիւցապնական փայլուն
ճիգեր, տեսու յոշնորհ որ այս
առաւ Հայութիւնը, հակառակ իր
հինգ դարեան տարկութեան, է
և կը մնայ իր մեծագործ նախա-
հարց հարազատ սերունդն:

Յիշատակական փոքր շարժում-
ները խոհուն մտքերու համար փո-
թորակի սոսկ գայի մէջ, որպէս և

Հայ ազգին մէջ լռիկ տարող բա-
րայ սլան մեծ ոյժի մը ստող նշան-
ներն էին և իրեն նորանշան երևոյթ
Հայոց մէջ՝ թուրք կառավարու-
թեան խոկմանց ընդարձակ նիւթ
մատակարարելու բնութիւնը ունե-
ին բայց թուրք պետական մարդիկ
թեթեւ հայեացքով դիտեցին ծան-
րաշիւ երևոյթը, չուզեցին թու-
փանցի իրերու խորը, որով և չը-
ցան Հայերուն գահադաշն տալու
անհրաժեշտ հարկը զգալ. սխալե-
ցան անգամ մ'եւ, մեզ գէտ մի
անգամ ահա տե՛ք քաղաքականու-
թեան մէջ անդրդուելի մնալով:

Հետեւաբար հայոթանքը ոչ միայն
չարունակուեցաւ, այլ և նոր, սոո-
կալի կերպարանք մը ստացաւ Սա-
սանի ջաղ-սլան վրդովեցաւ ամ-
բող Հայութիւնը, մարդասէր օ-
տարներ, մասնաւորապէս Անկիոյ
մէջ, այլ և այլ միջոցներով արժե-
ցոյցին հանրութեան խիղճը. բա-
ղարներ յամենուստ. Եւրոպայ սրո-
շեց միջամտել, ըստ երևութիւն ի
նոյ ստու Հայերուն, որք ի վերջոյ մեծ
յուսութեամբ թեան մը գտաւար-
տուեցաւ երբ տեսան թէ Եւրո-
պայան միջամտութիւն կաշուած
ձեւակն և խարստիկ դիւանա-
գիտարտն խողը յանգեցաւ բա-
րենորդ մանց խեղճ ծրագրի մը,
չոր այնու սմեկայի և Սալթանը
կը մերժէր ընդունել:

Յստի հատկան միջոցներու մը-
ղուած Հայ երիտասարդութիւնը
ուզեց զգալու պատմական մը տալ Սա-
լթանի և անխոր Եւրոպայի կող-
մաւորեց Պաշայ մէջ մեծ ցոյց մը,
որոյ միջոցին գրաւորապէս յայ-
տարարեց Հայ ազգին խախտան
պահանջները:

Յիցի տպաւորութիւնը ահա-
դին եղաւ Եւրոպայի և Ամերիկայի
մէջ ցնցուեցաւ թուրք կառավա-
րութիւնը և իր Հայ ջիւղ սղորունք
ներուն հաւատարմի՝ ազգային ան-
գամ ընդ միշտ ջախջախել Հայո-
թեան ոյժը իր բուն կեդրոնին մէջ
և ահա ս'ստ. Հայաստանի ընդ-
հանուր կոտորածը:

Այստեղ աւերող չենք գտներ
յիշեցնել ինչ որ ԻՐԱՎՈՒՆԻՒՄԻ 1885
տարւոյ հոկտ. 2 թւայն մէջ՝ Հայք
ի Տաճկաստան, վերնագրին կող-
յոգուածին հետեւեալ տողերով
նախ տեսուած էր:

«Ժամ է որդ որ Եւրոպայ ձեռ-
նարկէ Հայաստանի խառնուած
բարենորոգում. երբ զս'ծագրելու
կ'է ոչ թող պատրաստուի տեսնել

թէ ինչպէս իր գոյութիւնը գարեթ
իվեր պահպանել կրցող գիւցադ-
նական ժողովուրդ մը գիւցադ-
նաբար կը ջախջախի և կոշնչանայ
սասլակի մրցամարմը ընդդէմ
Տաճկին, որոյ գոյութիւնն իսկ
անտեղի էր յիշ. գարու մէջ»:

Հայաստանի կոտորածները Հա-
յութեան ահագին կորուստներ
պատճառեցին, զորս երկար, շատ
երկարատեւեցաւ միայն կրնան դար-
մանել. հարուածը սասկալէր, սա-
կայն հակահարուածը ոչ նուազ
աղետարեր եղաւ բոլոր թուրքի-
ոյ համար:

Թշնամին ուղեց ջախջախել Հա-
յութիւնը, որ սակայն թուրքիոյ
գոյութեան անհրաժեշտ պայման-
ներէն մին կը կողմէ. եթէ թուրք
պետական մարդիկ գոյս կանխա-
գիտնալու չափ լրջախոհութիւն
չունեցան, այժմ թող իմանան ճշ-
մարտութիւնը, երկրին վիճակը
աչքի առջև ունենալով:

Թող տեսնեն թէ երբ փորձեցին
ջախջախել Հայը, երկրին արհա-
տական և առևտրական գործոնե-
ութեան ներկայացուցիչ միակ
բնիկ տարրը, ամբողջ երկիրը մատ-
նուեցաւ անտեսական քայքայման
և անխիչ անութեան, որոյ տուէն
տեսնել այլևս կառավարութեան
ձեռնհասութեան շրջանակէն բա-
լորվին գարս է:

Հայուն արտադրող ոյժին հետ
ոչնչացան արհեստ և առևտուր.
ցամքեցան երկրին հասոյթի ուղ-
րի բներն կառավարական պարտա-
գանձը լեցնելու. հարկը մը գտնել
անկարելի կերեւի երկրին անտեսու-
կան արդի պայմանաց մէջ. թուրք
կառավարութեան միակ յենարանը
ս'է բանակը նոյնպէս քայքայման
նշաններ ցոյց կուտայ, քանզի տես
տեղ զինուորներն հանրային
գիծութեան կը գիմեն ցրտէ և
անօթութենէ չի մեռնելու համար.
ոմանք ալ առանձին խմբակներ կը
կողմեն և կերթան ինքնազոյալ
յորձակելու գիւղերու վրայ և
կը կողպան զանոնք, առանց խը-
տիր գնելու թուրք և Հայ գիւ-
ղերու միջև:

Մնակութիւն և անխիտանա-
լիւն երկու ահագին ուրաւկան-
ներու նման Հայոց թափուած ար-
եան մէջէն իրենց գլուխ բարձրա-
ցուցած՝ կը սպառնան թուրք կա-
ռավարութեան և Սալթանական
զահին:

Փոթորիկացի է մօտիկ ստաղ ուն:

Ահա իսկական արդիւնքն փայ-
րագ հայոթանաց ընդդէմ Հայ-
ութեան:

(Ըր. Բաշե)

ԼՕՐՏ ՍՕԼՁՊԵՐԻԻ ՃԱՌԻՆ

ԱՌԹԻԻ

Անկիոյ նախարարեան խնջոյքի
մէ մէջ վերջերս ճառ մ'արտա-
տանելով Հայկական խնդրոյ մասին
ի մէջ այլոց լսած է թէ, Անկիոյ
բազուկը որքան ալ զօրութեամբ ըլլայ,
չկրնար Հայոց օգնութեան համար,
քանի որ նոքա կը բնակին լեռնա-
լին և ծովէն հեռու երկրի մը մէջ:

Արժեքն—Արժեքն լրագրոյ խմբագ-
րապետ Տիար Միստո Չերազ իր
թերթի վերջին թուոյ մէջ Լօրտ
Սօլղպերի խօսքերը խիստ քննա-
դատութեան մ'ենթարկած և
Անկիոյ Հայոց նկատմամբ բռնա-
հայտանք և անարդարանալի
ընթացքը այնքան մեղին և անհր-
քելի փաստերով հաստատած է, որ
օգտակար դատեցինք իր յոգ. ուսմը
մեծ մասամբ թաշգմ սուր մեր ըն-
թերցողաց համար:

Նա (Սօլղպերի) իր երեկ երե-
կոյեան ճառին մէջ պարծեցաւ թէ
ինք անձամբ յօրինած է կիւրառի
գաղտնագիրը. Արդ' ինչ կրնէ այս
գաղտնագիրը:

—Եթէ Ռուսիոյ կողմէն ու և է
ժամանակ փորձ մ'ըլլայ ինչ
վեհապետութեան Սալթանի եր-
կիրներուն ու և է մասին տիրա-
պետելու, Անկիոյ պարտականու-
թիւն կը ստանանէ ինչ. և վեհա-
պետութեան Սալթանի հետ միա-
նուր, զինու զօրութեամբ պաշտ-
պանելու համար խնդրոյ առար-
կայ եղող երկիրը:

Այլ հարցնեմք ազգի մարքիդին
թէ ինչպէս Անկիոյ զոր- զօր- զօր-
պետի կրնար պաշտպանել թշրա-
հայտանքը, որ քանայն է և չ-
վեհեքն երեւոյս:

«Երբ խնդիրը կիւրառի տէր լի-
նելու վրայ էր, Լօրտ Սօլղպերի
իր հայրենիքը կարող կը կարճէր
Հայաստանը պաշտպանելու մօտ-
կօփեան բանակներու գէտ. իսկ
այսօր որ այդ գէտ ուղեւոր երկիրը
մասնաւոր կապողներու գէտ
պաշտպանելուն կուգայ կողմը,
նա յանկարծ փոխարկ մը կը նետէ
իւր քարտէզին վրայ և կը տեսնէ որ
Հայաստան ծածկուած է լեռներով
և չունի Անկիոյ նախարարին

անմատչելի ծովագետը :

«Եւ-ի»-ն պիտի ըսէ ազնիւ մար-
քիզը՝ եթէ իր քարտէզին վրայ ի-
րեն ցոյց տանք Հայկական Կիլիկի-
ան. ահա երկիր մը որ լեռնային
գիրքերու խորը կորսուած չէ, և
զոր մէկ ծայրէն միւսը կողու-
մի Միջերկրականի կոհակներն, որ-
պէս փորթու կալի եզրերը կողու-
մի Ատլանտիկի ծովանք : Կիլիկի-
ան Կիլիկիոյ գիւմարն է, և Անկի-
ան նաւատորմը կրնայ գիւմարու
կոծել Կիլիկիոյ բոլոր նաւահան-
գիստները և ամեն ժամա՝ ալ ցա-
մաք հանել բանակ մը : Այսպիսի
բանակի մը համար, որ կրնայ Զէյ-
թունի աննուաճելի լեռնական բը-
նակչաց աշակցութեան վրայ վա-
տահիլ անկասկած, Կիլիկիոյ գրա-
ւուած այնքան գիւմարն պիտի լի-
նէր, որքան պիտի մը Հայոց բար-
քի մէջ : Սակայն Լօրտ Սօլդարի
կը նախընտրէ ինկնալ՝ հակառու-
թեան մէջ, քան երկարելու գո-
հոյութան : Եւր Ռուսիա Պուլ-
կարները պաշտպանեց, անոնց հա-
մար զոհեց ահագին գումար մը-
և 100,000 զինուոր, իսկ երբ Անկ-
իա կը պաշտպանէ Հայերը, ա-
նոնց համար կը դա՛նէ Իր-
պերճախօտութիւնը :

«Եթէ Անկիա այդպէս բարձրովին
անկարող էր Հայաստանի օգնելու,
ինչու՞ համար յարոյց Հայկական
խնդիրը և մեր հայրենակցաց ներ-
շնչեց վտանգաւոր յայտեր : Եթէ
իր նաւատորմը առանց հարուած
մ'արձակելու «հաւէ մը»-ն առած
աղուէսի մը նման ամօթահար օպի-
տի վերադառնար Մալթա, ինչու՞
համար այնքան բարձրագոյ աղ-
մուկներով խրկուեցաւ մինչև Տոր-
տանէի բերան : Անկիոյ ճառա-
խօսներ նախատեցին մահմէտական
կրօնը, գահընկեցութիւն ուղառ-
նացան Սուլթանին և առաջարկե-
ցին թուրքիոյ բաժանում : զայ-
րացուցին խալիֆը և իր խալիֆ
հպատակները, որ որքան հեղեղի
մը մէջ խեղդեցին Հայկական նա-
հանգները, և հիմայ երբ ջարդէն
ազատողները յուսահատութեան
աղբխարը աղաղակներ կարձակեն,
Կիլիկիոյ գահապարի հեղինակը
շամբանեալ զուարճութեան մէջ,
պաղ արեամբ կ'սէ իրենց :

— Անկիա ձեզ համար բան մը չը
կրնար ընել, որովհետեւ դուք ձեզ
հայրենիք ընտրել էք, այնպիսի եր-
կիրմը, որ ոչ հարթ է և ոչ ծովագետը :
«Պակայն եթէ մենք ազգու-
պէս կը գտաւարտեմք անկիւ-
կան կառավարութեան մեղապարտ
ես սիրութիւնը, ոչնուաղ կը գա-
տաւարտեմք նաեւ Գերման կա-
ռավարութեանը անպատկառ ան-
հոգութիւնը, Ռուս կառավարու-
թեան անզգայութիւնը և միւս
կառավարութեանց անտարբերու-
թիւնը : Օրմը պատմութիւնը պի-
տի ըսէ թէ թուրք գայլը յօշոտեց

Հայկական գառնուկը վեց կողոր-
դիլոսներու արտառող աչքին առ-
ջէն : »

ՊԱՐՈՆ ԲՕԼ ԿԻԼՊԵՐ

Մինչ Ֆրանսական մամուլն Օս-
մանեան կառավարութեան չափա-
գէտ ներշնչումներէն կաշկանդեալ
ամենայն սառնութեամբ կը վերա-
բերի բերաւոր հայ տառապելոց
վիճակին, միակծալական է տեսնել
որ ֆրանսական ասպետազարմ
ուղղին վեհ ոգին և մարդասէր
սիրտը տակաւին իրենց ներկայա-
ցուցիչներն ունին այն անձանց վէճ,
որք հանրային կարծեաց առաջ-
նորդներն և իրենց երակաց մէջ
կը կրեն բռն, տնտես փռանսա-
կան արեւն :

Տիկին Սէվէրին մը Ռօշֆօր մը
և Գլէմանս մը չեն վարանիր մերթ
իրենց ձայնը բարձրացնելու և վը-
սեմ՝ զգայութեան արտայայտելու
ի պաշտպանութիւն և ի կարեկ-
ցութիւն Հայաստանի նահատա-
կաց :

Այս կարգէն է նաեւ «Նուէլ աժ»
ընան յի ազնիւ խմբագիր պարոն
Բօլ Կիլպէն, որ Սասունի կոտո-
րածէն ի վեր իւր բարձր գրելին
նիւթ ընտրած է պախուղակող հա-
յութեան վիճակը և Օսմանեան
վարչութեան ամեն տեսակ զեղ-
ծումները, զոր անհերքելի վաւե-
րականութեամբ մարկապարանոց կը
նէ և ջախջախիչ քննադատութեան
մը կենթարկէ անխնայ :

Պարոն Կիլպէն իր ցեղին (ֆրան-
սական արեւն և ոչ միայն ֆրան-
սական անուն կրողներուն) յա-
տուկ ասպետական վեհանձնու-
թեամբ և Արեւելի իրաց և մար-
դոց խորին հատուկեամբ՝ պատե-
րազմի գաշտին վրայ ինտելլեկտու-
օգնելու համար իւր անձը վտան-
գի գնող մարդասէր հոգիներու
նման՝ բազմաշարք հայութեան
վերադարձը մարմնայն քով անվախ
կանգնած կը մնայ, և անոր վեր-
քերը մասնաճիւղ կընէ, յանուն
մարդկութեան դարման հայցելով
այդ արիւնդարմ փտանգելոյն վի-
ճակին :

Պիտի գտնուի՞ արդեօք մէկը, որ
անսայ :

Բայց ինչ որ ալ պատահի, պա-
րոն Կիլպէն կրնայ վստահ ըլլալ,
որ եթէ մինչև իսկ ճակատագիրը
սահմանած ըլլայ հայուն քառա-
սուն անգամ դարաւոր գոյու-
թիւնը ջնջել աշխարհի երեսէն, նա
իր հոգին պիտի աւանդէ օրհնե-
լով այն բարերար ու մարդասէր
ձեռքեր, որք իրեն ու քաջարի
Տիֆօնի նման՝ ջանացին հայութեան
վէճերը դարմանել և հսկեցին ա-
նոր հոգեւորաբան :



ԽԺԴԺՈՒԹԻՒՆՔ
Սերաստիոյ թուղթաւոր գիւղին
20-27 Դեկտեմբեր և 1912

Թուղթաւոր գիւղէն 10 վայր-
կեան հեռաւորութիւն ունեցող
հրեշտակապետի վանքն՝ որ գիւ-
ղին արեւմտեան կողմն կը գտնուի
և որ բաւական թուով արջառներ
ունի, զըջակայ գիւղերու կոտո-
րածներէն մազապուր պրծող 60-
70 անձերու ապաստանն եղածէր,
սպա մէջ կային իրենք և անշտի-
հատ մանչեր ու աղջիկներ : Թիւրք
խուժանն թուղթաւոր ու շրջակայ
գիւղերն աւարի տպէ վերջ իր մըտ-
քէն չի վրիպեցուն նաեւ հրեշ-
տակապետի վանքն, մեծ բազմու-
թեամբ յարձակում կը գործեն, և
հակառակ վանքին մէջէն հայոց ը-
ած բռնուն գիւմարութեանը,
թիւրքերն կը յաջողին դռներ կոտ-
րելով ներս խուժել. իրենց առա-
ջին գործն կ'ըլլայ խողխողել ա-
պաստանեալներն, առանց խորու-
թեան սեռի և հասակի, և յետոյ
վանքին գոյքերն, տաճարին մա-
սուքը, խաչ և այլ անօթներն կո-
ղոպտելով կը սրբապղծեն ամենայն
խայտառակութեամբ ու արջառ-
ներն ալ միատեղ առնելով կը հե-
ռանան :

Սրապանեան Գերդաստանէն 7
քով երիտասարդք այս գոթաղդ-
դեպքերու միջոցին գիւղին նստն
խոյս տալով կը յաջողին Սերաստի-
մանելու. պոքա գիւղօրէնց կրած
անհամար վնասն տեղեկագրեցին Կ.
Պօլիս իրենց հայրենակցացն և ան-
միջական նիւթական օգնութիւն
հայցեցին անոնցմէ. Պօլիս պան-
դուխտ հայրենակիցք ևս 150 ոսկի
չափ մի գումարը զրկեցին իրենց
ընտանեաց ու եղբարց վերկութիւ-
նը ծածկելու և զանոնք նօթութեան
փրկելու համար, և սակայն Լէֆ-
դէրեան անուն լուսալալիս Հայ
մասնիկն իմանալով թէ Ամերիկ-
եան Պօլիս ընկերութեան ընդհա-
նուր Տեսուչ Մըսալը Հապըթի
միջոցաւ Պօլէն այս խեղճ գիւ-
ղացւոյ դրամ է եկած՝ անմիջա-
պէս կուսակալին լուր կը հասցու-
նէ. իսկ երիտասարդք այս գումարն
կառնեն ու Սերաստիոյ քաղաքին
ազգայնոց օգնութեաննալ գիւմ-
արով բաւական պիտի լը հաւաքեն
իրենց գիւղակիցներուն ի նպաստ :

Կոտորածի դէպքէն 20—25 օր
վերջ գիւղացւոց օգնութիւն փու-
թացնելու համար կը գիւմն կու-
սակալին և ճանապարհի ապահո-
վութիւն կը խնդրեն. կուսակալն
բարեհաճութիւն ցոյց տալով 10
ոստիկաններ ուղեկից տալ կը խօս-
տանայ և հարկւարապետն Հիւ-
սէին աղան կանչելով՝ անոր պէտք
եղած պատուէրն տուած պահուն
մեր երիտասարդներէն մին դա-
նը ետեւէն ականջ կը դնէ ու (Հայ-
տէ պիլոտիլիկ կիպի) խօսք մը կը
հասնի ականջին. որով դաւադ-
րութեան մը կ'սկսած կը յղանայ

իր սրտին մէջ. և զայն իր ընկեր-
ներուն կը յայտնէ, սոքա վեցհար-
ուածեայներով գաղտնապէս կը զին
ուին ու Դեկտ. 10, ժամը (ը.թ) 8
ին երեկոյն ճամբայ կեննն ոս-
տիկանաց հետ. երբ քաղաքէն 2
ժամ կը հեռանան (պողաղքէօր-
րիւսի) կոչուած գետեղրն հասած-
նուն պէս, ոստիկանք «կեցիք կեա-
վուռներ ստանիդ մեզի տուէք»,
կը հրամայեն. անմիջապէս մեր
քով երիտասարդք վտանակ քա-
կի իրենց ծոցերէն վեցհարուած-
եայներն հանելով՝ կընդդիմադրեն
այս պաշտօնական աւազակներուն
երկուստէք եղած ընդհարումնե-
րուն երիտասարդք մին զոհուե-
լով միւսներն կ'փախն ու մօ-
տակայ խօստանայ ըսուած գիւղն
կոպտասանին և ի վերջոյ կը յաջո-
ղին այն դրամներն տառապելոց
բռնելով, զայնս փոքր իշտուէ
սփոփել :

Սա ալ իշտուէ Բօստանի Հայոց
հանցէին եկած դրամներն կառա-
վարութիւնը չի յանձներ, որպէսզի
չ'յը նօթութեան կորնչին :

Մ. Գ.

ՏԻՎՐԻԿԻ ԽՈՒՌՆԱՎԷԼ ԳԻՒՂՆ

Այս գիւղն կը գտնուի Տիւրիկէն
3 ժամ հեռաւորութեամբ Տէրի-
տաղիոյ ող բլուրներուն մէջ տեղ
սա անսովի գիւղք մ'ունի և
սորա համեմատ ալ իր բնա-
կիչներն քաջախիտ ու ինքնուրա-
նան են. Այս գիւղ 80—100 հայ
աններէ կը բաղկանայ. 95 դեկտեմ
ին 350 Թուրքեր գիւղին վրայ յար-
ձակում կ'ընեն. տեղոյն երիտա-
սարդք ստատկապէս կուռելով ետ
կըմղեն ի շնամիներն, սոքա 10—12
անձեր կ'ուստ տալէ վերջ ետ կը
քաշուին, առանց հայոց մի վնաս
հասցունել կրնալու :

Բայց հայք իրենց այս փրկու-
թիւնը կը պարտին մեծաւ մա-
սամբ նշան Մամիկոնեան անուն
տեղացի քով երիտասարդին :

Այս նշան Մամիկոնեանը այն ե-
րիտասարդն է, որ Գում-Գարուի
դէպքին առթիւ բանտարկուած
ու ցմահ բերդապղծելութեան գա-
տապարտուած էր. բայց վերջին
ընդհանուր ներման առնն նա ալ
ազատելով իր հայրենիք վերա-
դարձաւ : Սա տեսնելով չըջակայ
գիւղերուն մահմէտականներէ կը-
րած անտանելի տառապանքն ու
կառավարութեան վաթար ըն-
թացքն, որոշեց ինքնապաշտպա-
նութեան գիւմը և գիւղացւոց
պաշտպան լինիլ. նա յաջողեցաւ
իրեն ընկերները գտնել ու խուժ-
կաղմել այս վերջին դէպքին ժա-
մանակ քաջաբար իւր գիւղակից-
ներն պաշտպանելէ վերջ, կոտա-
վարութեան ծուղակն չիցնալու
համար, իր ընկերներով Աղտաղի
ապառաժուտ լեռան քարայրնե-
րուն մէջ գաշտեցաւ ուր ցարդ-
կապաստանի :

Մ. Գ.

(*) հանրային նշանաւոր պարտէզ
իլօնտն :

